Կ-556-07.04.2023-ՏՏԳԾ-011 **Երկրորդ ընթերցում**
Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի «՝ հող չհանդիսացող» բառերը հանել:

Հոդված 2. Օրենքի 28.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «գ» ենթակետի.

1. առաջին պարբերության «(բացառությամբ հողերի)» բառերը հանել.
2. 5-րդ պարբերությունում «հետ համաձայնեցված» բառերը փոխարինել «որոշմամբ հավանության արժանացած» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

Հոդված 4. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կ-556-07.04.2023-ՏՏԳՇ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի «՝ հող չհանդիսացող» բառերը հանել:

Հոդված 2. Օրենքի 28.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «գ» ենթակետի.

~~1.~~ առաջին ~~պարբերությունում «~~պարբերության «(բացառությամբ հողերի~~»~~)» բառերը ~~փոխարինել «այդ թվում՝ հողերի» բառերով.~~հանել.

~~2.~~ 5-րդ պարբերությունում «հետ համաձայնեցված» բառերը փոխարինել «որոշմամբ հավանության արժանացած» բառերով:

~~***Հոդված 2.***~~ ***Հոդված 3.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

Հոդված 4. ~~***Հոդված 3.***~~ Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Կ-556-07.04.2023-ՏՏԳԾ-011/1) օրենքների նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկների

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին					
1.	Ազգային ժողովի պատգամավոր Վ. Ղալումյան	1-ին (խմբագրված 2-րդ) հոդվածի 1-ին մաս	1-ին (խմբագրված 2-րդ) հոդվածի 1-ին մասից հանել՝ «այդ թվում՝ հողերի» բառերը, քանի որ ըստ քաղաքացիական օրենսգրքի, անշարժ գույք եզրույթը արդեն իսկ իր մեջ ներառում է հողամասերը և՛ անշարժ գույքի կազմում մատնանշել այդ հողերը ավելորդ է: 1-ին մասում՝ «1. առաջին պարբերությունում «բացառությամբ հողերի» բառերը փոխարինել «այդ թվում՝ հողերի» բառերով.» բառերի	Ընդունվել է	Ընդունվել է

			փոխարեն **1-ին մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝** **«1.առաջին պարբերության «(բացառությամբ հողերի)» բառերը հանել.»:**		
«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին»					
1.	**Ազգային ժողովի պատգամավոր Վ. Ղալումյան**	1-ին հոդվածի 1-ին մաս	1-ին հոդվածի 1-ին մասից **հանել՝ «այդ թվում՝ հողերի» բառերը, քանի որ ըստ քաղաքացիական օրենսգրքի, անշարժ գույք եզրույթը արդեն իսկ իր մեջ ներառում է հողամասերը և՛ անշարժ գույքի կազմում մատնանշել այդ հողերը ավելորդ է:** **1-ին մասում՝** **«1. առաջին պարբերության «բացառությամբ հողերի» բառը փոխարինել «այդ թվում՝ հողերի» բառերով» բառերի փոխարեն 1-ին մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝** **«1. առաջին պարբերության «(բացառությամբ հողերի)» բառերը հանել.»**	**Ընդունվել է**	**Ընդունվել է**

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին»					
1.	**Ազգային ժողովի պատգամավոր Վ. Ղալումյան**	**1-ին հոդվածի 1-ին մաս**	1-ին հոդվածի 1-ին մասից հանել «այդ թվում հողերի» բառերը. **քանի որ ըստ քաղաքացիական օրենսգրքի, անշարժ գույք եզրույթը արդեն իսկ իր մեջ ներառում է հողամասերը և՛ անշարժ գույքի կազմում մատնանշել այդ հողերը ավելորդ է:** 1-ին մասում՝ «1. «բացառությամբ» բառը փոխարինել «այդ թվում» բառերով.» բառերի փոխարեն շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «1. «(բացառությամբ հողերի)» բառերը հանել.»	Ընդունվել է	Ընդունվել է
«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին					
1.	**Կառավարություն**	**1-ին հոդված**	«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված է, որ պետական սեփականություն համարվող՝ հող	**Ընդունվել է**	**Ընդունվել է**

			չհանդիսացող անշարժ գույքի մասնավորեցումից ստացվող միջոցները պետական բյուջե են ուղղվում 70 տոկոսի չափով: Այդ դրույթն անփոփոխ թողնելու պարագայում հակասություն կառաջանա նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող կարգավորման հետ: Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկում ենք վերոնշյալ մասից՝ «՝ հող չհանդիսացող» բառերը հանել՝ **Առաջարկում ենք լրացնել նոր 1-ին հոդված՝ հետևյալ բովանդակությամբ.** **«Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137**		

			օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի «՝ հող չհանդիսացող» բառերը հանել:»: **Ըստ այդմ հոդվածների համարակալումը փոխվել է:**		
2.	**Կառավարություն**	**1-ին (խմբագրված 2-րդ) հոդված**	«28.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «գ» ենթակետի.» բառերից առաջ լրացնել «Օրենքի» բառը	**Ընդունվել է**	**Ընդունվել է**